ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» փետրվարի 2020թ. N----- Ա

## ՈՐՈՇՈՒՄ

## «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԾՆՆԴԱՏՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 954-959-րդ, 961-962-րդ հոդվածներով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ տալ «ԴԵՎԻ ՍԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Հավատարմագրային կառավարիչ) կողմից ներկայացված՝ «Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) բաժնետոմսերի հավատարմագրային կառավարման պայմանագիր կնքելու առաջարկին և Ընկերությունում ներդրումներ կատարելու ծրագրին՝ համաձայն հավելվածի:

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող Ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հանձնել Հավատարմագրային կառավարչի՝ հավատարմագրային կառավարմանը:

3. Թույլատրել Երևանի քաղաքապետին Հավատարմագրային կառավարչի հետ Երևան համայնքի անունից կնքել հավատարմագրային կառավարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), 10 տարի գործողության ժամկետով՝ հանդես գալով որպես հավատարմագրային կառավարման հիմնադիր, Պայմանագրում, որպես պայմանագրային պարտավորություն, ներառելով սույն որոշման 5-րդ կետի համաձայն սահմանած պայմանները:

4. Երևան քաղաքի սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման պայմանագրով սահմանել, որ հավատարմագրային կառավարիչն ընդունում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և Ընկերության կանոնադրությանը համապատասխան Ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները, այն է.

1) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և խորհրդի իրավասությանը վերապահված որոշումները գրավոր ձևով, հետևյալ հարցերով միանձնյա ընդունելու իրավունքը.

ա. Ընկերության գործադիր մարմնի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

բ. Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը,

գ. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

դ. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

ե. հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

զ. Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով,

է. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը,

ը. Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,

թ. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,

ժ) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,

ժա) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը:

5. Սահմանել Պայմանագրի հետևյալ էական պայմանները.

1) հավատարմագրային կառավարման ընթացքում՝ հիմնադրին վճարվելիք շահաբաժնի չափը հաշվարկել Ընկերության զուտ շահույթի 22%-ի չափով, բայց ոչ պակաս քան 2,000,000 ՀՀ դրամ, իսկ հաշվետու տարվա տարեկան արդյունքներով վնաս ստանալու դեպքում Երևան համայնքի բյուջե վճարել տուգանք՝ 1,000,000 ՀՀ դրամ,

2) Հավատարմագրային կառավարիչն իրավունք չունի օտարել, գրավ դնել, վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնել Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ և շարժական գույքը,

3) Հավատարմագրային կառավարիչը պարտավորվում է գույքի վերակառուցման, հիմնանորոգման, կահավորման և բարեկարգման նպատակով՝ հավատարմագրային կառավարման առաջին 5 տարիների ընթացքում կատարել առնվազն 200,000,000.0 ՀՀ դրամի չափով ներդրումներ,

4) պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման՝ Հավատարմագրային կառավարչի միջոցների հաշվին,

5) հաշվետու տարվա համար, համաձայնեցված տարեկան ծրագրով, նախատեսված ներդրումային պարտավորությունները պայմանագրով սահմանված

ժամկետում չկատարելու կամ մինչև 50 տոկոսը կատարելու դեպքում ընկերությունը պարտավոր է 3 ամսվա ընթացքում կատարել նախատեսված, բայց չկատարած ներդրումներն ամբողջությամբ՝ միաժամանակ Երևան համայնքի բյուջե վճարելով տուգանք՝ չկատարված ներդրումների գումարի 20 տոկոսի չափով,

6) հաշվետու տարվա համար, համաձայնեցված տարեկան ծրագրով, նախատեսված ներդրումային պարտավորությունները պայմանագրով սահմանված ժամկետում 50 կամ ավելի տոկոսով կատարելու, սակայն ամբողջությամբ չկատարելու դեպքում ընկերությունը պարտավոր է 2 ամսվա ընթացքում կատարել նախատեսված, բայց չկատարած ներդրումներն ամբողջությամբ՝ միաժամանակ Երևան համայնքի բյուջե վճարելով տուգանք՝ չկատարված ներդրումների գումարի 10 տոկոսի չափով,

7) ներդրումային ծրագրով նախատեսված՝ հիմնադրին վճարման ենթակա չափով զուտ շահույթի վճարումը մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հուլիսի 15-ը չվճարելու դեպքում Հավատարմագրային կառավարիչը պարտավոր է մեկամսյա ժամկետում ապահովել ներդրումային ծրագրով նախատեսված չափով զուտ շահույթի վճարումը և միաժամանակ Երևան համայնքի բյուջե վճարելով տուգանք՝ այդ գումարի չափով,

8) Հավատարմագրային կառավարչի կողմից սույն որոշման 5-րդ կետի 5-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Հիմնադիրը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը՝ այդ մասին օրենսդրությամբ սահմանված կարգով տեղյակ պահելով հավատարմագրային կառավարչին: Պայմանագիրը լուծելու դեպքում մինչև պայմանագրի լուծումը հավատարմագրային կառավարչի ստանձնած պարտավորությունները ենթակա են կատարման,

9) Հավատարմագրային կառավարիչն իրավունք չունի Հավատարմագրային կառավարման մասին պայմանագրով իրեն վերապահված իրավունքների և պարտականությունների կատարումը վերապահել երրորդ անձանց:

10) Հավատարմագրային կառավարիչն իրավունք չունի երրորդ անձանց հանձնարարել սույն Պայմանագրով իր վրա դրված պարտականությունների կատարումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ««ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԾՆՆԴԱՏՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 954-959-րդ, 961-962-րդ հոդվածներով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածով՝ սույն որոշման նախագծով նախատեսվում է հավանություն տալ «ԴԵՎԻ ՍԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ «Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) բաժնետոմսերի հավատարմագրային կառավարման պայմանագիր կնքելու և Ընկերությունում ներդրումներ կատարելու առաջարկին:

Ընկերության կողմից նախատեսվում է իրականացնել փուլային ներդրումներ հետևյալ ուղղություններով՝ կոնսուլտացիոն-ախտորոշիչ, օպերատիվ գինեկոլոգիական, արհեստական բեղմնավորման (ԷԿՈ) բաժանմունքների ստեղծման, վերազինման և վերանորոգման աշխատանքների իրականացման համար:

Տևական ժամանակ Ընկերությունը գործում է՝ իրականացնելով իր առջև դրված նպատակները, պետական պատվերի շրջանակներում: Վճարովի հիմունքներով ազգաբնակչությանը մատուցված հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայությունների քանակը կազմում է շուրջ 5.7%: Ներդրումներ կատարելու դեպքում հնարավոր կլինի էականորեն մեծացնել մատուցվող ծառայությունների անվանացանկը և որակը:

Բուժհաստատությանը անհրաժեշտ է ձեռքբերել նոր սարքավորումներ, որոնք հնարավորություն կընձեռեն մատուցել ժամանակակից պահանջներին համապատասխան բուժօգնություն: Դրանով պայմանավորված՝ ծննդատանը սպասարկվող ազգաբնակչության մեծ մասը գերադասում է բուժօգնություն ստանալ այլ բուժհաստատություններում, ավելի ճիշտ ախտորոշվելու, բուժումը արդյունավետ կազմակերպելու և հիվանդությունը վաղ ժամկետներում կանխելու նպատակով, իսկ հարկ եղած ժամանակ նաև վիրահատվելու նորագույն սարքավորումների օգնությամբ:

Ծննդատան վճարովի ծառայությունների եկամուտները ապահովում են ծննդօգնության, գինեկոլոգիական, ախտորոշիչ և բուժական ծառայությունների միջոցով: «Քանաքեռ - Զեյթուն ծննդատուն» ՓԲԸ-ի ծառայությունների հիմնական օղակներից մեկը կազմում է գինեկոլոգիական և կոնսուլտացիոն - ախտորոշիչ բաժանմունքները, որոնց զարգացումը և ստեղծումը անհրաժեշտ են ծննդատան զարգացման գործընթացի համար:

Ընկերության ներկայիս ծառայությունների տեխնիկական հագեցվածությունը թույլ չի տալիս իրականացնել բոլոր անհրաժեշտ հետազոտությունները և գործիքային միջամտությունները ապահովելով հիվանդների լիարժեք ախտորոշումը և բուժումը: Կարևոր նշանակություն ունեն նոր տիպի հետազոտությունները, որոնք արդյունավետորեն կլրացնեն գործող հետազոտություններին: Այն հետազոտությունները և գործիքային միջամտությունների մասով, որոնք չկան ծննդատանը, հաճախորդները ուղեգրվում են այլ բուժհաստատություններ: Որպես հետևանք խզվում է կապը ծննդատան հետ, հիվանդները կրում են անհարմարություններ և նվազում է ծննդատան եկամուտը:

Նոր ծառայությունների ներդրման հետ կապված Ընկերության կողմից իրականացվել է շուկայի մանրամասն վերլուծություն, որի արդյունքում առաջացել է մրցակցային առավելություններ ունեցող լաբորատոր, գործիքային, վիրաբուժական, գինեկոլոգիական և կենցաղային սարքավորումների ձեռքբերման անհրաժեշտություն:

«ԴԵՎԻ ՍԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հավատարմագրային կառավարման հանձնելու դեպքում պարտավորվում է պայմանագրային ամրագրմամբ՝ բժշկական կենտրոնի կապիտալ և ընթացիկ շինարարական աշխատանքների իրականացման, այն ժամանակակից տեխնիկական սարքավորումներով հագեցնելու և բուժական անձնակազմի վերապատրաստման նպատակով, 10 տարվա ընթացքում կատարելով շուրջ 200,0 մլն (երկու հարյուր միլիոն) ՀՀ դրամի ներդրումներ՝ սարքավորումների գնման, նոր ծառայությունների ներդրման և վերանորոգման աշխատանքների իրականացման համար: Ներդրումների եռգնման ժամկետը կկազմի շուրջ 10 տարի:

Ծրագրային ողջ ժամանակաշրջանում հավատարմագրային կառավարչին մասհանումը նախատեսվում է 94.8 մլն ՀՀ դրամ: Հիմնադրին վճարվող շահաբաժնի կանխատեսվող ծավալը կազմում է շուրջ 61.7 մլն ՀՀ դրամ (22 %):

Ներդրումային ծրագրի կարևոր բաղկացուցիչ մասերից է հանդիսանում նաև անձնակազմի կառավարման քաղաքականությունը: Ծրագրի իրականացման ժամանակ նախատեսում է եղած անձնակազմի վերապատրաստում և ներգրավում նոր ծառայությունների մատուցման գործընթացին, բացի այդ կստեղծվի թվով 12 նոր աշխատատեղ, որից 8 բժիշկ, 3 բուժքույր և 1 այլ անձնակազմի աշխատակից: Գործունեության ողջ ընթացքում նախատեսվում է հաստատության աշխատակիցների աշխատավարձների համահունչ բարձրացում:

Նախատեսվում է իրականացնել մասնագիտական խորհրդատվության, կոնսուլտացիոն ախտորոշիչ կենտրոնի և գինեկոլոգիական ծառայության իրականացման համար անհրաժեշտ շուրջ 650 քմ տարածքի վերանորոգում, որի ծախսերը կկազմեն 37.75 մլն ՀՀ դրամ:

Ներդրումների կատարման հիմնական ուղղություններն են՝ բժշկական կենտրոնի շենքի վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ (37.75 մլն դրամ), բժշկական սարքավորումների ձեռքբերում (86.75 մլն ՀՀ դրամ), կահավորանք

(6.5 մլն ՀՀ դրամ), կադրերի վերապատրաստում (2,0 մլն ՀՀ դրամ), կրեդիտորական պարտքի մարում (63.0 մլն ՀՀ դրամ), նախագծանախահաշվային աշխատանքներ (0.5 մլն ՀՀ դրամ), այլ ներդրումներ (3.5 մլն ՀՀ դրամ):

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ Երևան քաղաքի ավագանուն է ներկայացվում ««Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 1

## ««ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԾՆՆԴԱՏՈՒՆ» ՓԱԿ ԲԱՅՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՅՆԵՏՈՄՍԵՐՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Քանաքեռ–Զեյթուն ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 2

## ««ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԾՆՆԴԱՏՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Քանաքեռ–Զեյթուն» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ, համաձայն ծրագրում ներկայացված հաշվարկների, Երևան քաղաքի բյուջե 10 տարիների ընթացքում կվճարվի 61.7 մլն ՀՀ դրամ շահութաբաժին, իսկ ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված

Երևան քաղաքի ավագանու

2020 թվականի փետրվարի ___-ի

N ___-Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԴԵՎԻ ՍԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ «ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԾՆՆԴԱՏՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն զարգացման ծրագրի շրջանակներում «Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» ՓԲԸ ընկերությունում նախատեսվում է իրականացնել փուլային անհրաժեշտ ներդրումներ՝ կոնսուլտացիոն - ախտորոշիչ, օպերատիվ գինեկոլոգիական, արհեստական բեղմնավորման (ԷԿՈ) բաժանմունքների ստեղծման, վերազինման և վերանորոգման աշխատանքների իրականացման համար:
Ներդրումները իրականացվելու են արտերկրում բնակվող գործընկերների միջոցներով և «Բիո Ստեմ» ՓԲԸ – ի կողմից (փոխառություն):

## 2. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Ծրագրի իրականացման համար նախատեսվում է «Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» ՓԲԸ-ն վերցնել հավատարմագրային կառավարման 10 տարի ժամկետով: Նշված ժամանակահատվածում ընկերությունում նախատեսվում է փուլային ներդնել 200,0 մլն ՀՀ դրամ՝ սարքավորումների գնման, նոր ծառայությունների ներդրման և վերանորոգման աշխատանքների իրականացման համար:

Ծրագրային ողջ ժամանակաշրջանում ակնկալվող շահույթի մակարդակը կազմում է 427.8 մլն դրամ, իսկ միջին շահութաբերությունը՝ 9.4%: Ներդրումների ետգնման ժամկետը կազմում է 10 տարի (120 ամիս): Հիմնադրին վճարվող շահաբաժնի կանխատեսվող ծավալը կազմում է շուրջ 61.7 մլն դրամ (22 %):

## 3. ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Տևական ժամանակ «Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» ՓԲԸ-ն գործում է՝ իրականացնելով իր առջև դրված նպատակները, պետական պատվերի շրջանակներում: Վճարովի հիմունքներով ազգաբնակչությանը մատուցված հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայությունների քանակը կազմում է ընդամենը 5.7%: Ներդրումներ կատարելու դեպքում հնարավոր կլինի էականորեն մեծացնել մատուցվող ծառայությունների անվանացանկը և որակը: Բուժհաստատությանն անհրաժեշտ է ձեռքբերել նոր սարքավորումներ, որոնք հնարավորություն կընձեռեն մատուցել ժամանակակից պահանջներին համապատասխան բուժօգնություն:
Դրանով պայմանավորված՝ ծննդատանը սպասարկվող ազգաբնակչության մեծ մասը գերադասում է բուժօգնություն ստանալ այլ բուժհաստատություններում, ավելի ճիշտ ախտորոշվելու, բուժումն արդյունավետ կազմակերպելու և հիվանդությունը վաղ ժամկետներում կանխելու նպատակով, իսկ հարկ եղած ժամանակ նաև վիրահատվելու նորագույն սարքավորումների օգնությամբ:
Ծննդատան վճարովի ծառայությունների եկամուտներն ապահովում են ծննդօգնության, գինեկոլոգիական, ախտորոշիչ և բուժական ծառայությունների միջոցով:
ՓԲԸ -ի ծառայությունների հիմնական օղակներից մեկը կազմում է գինեկոլոգիական և կոնսուլտացիոն-ախտորոշիչ բաժանմունքները, որոնց զարգացումը և ստեղծումը անհրաժեշտ են ծննդատան զարգացման գործընթացի համար:
Ընկերության ներկայիս ծառայությունների տեխնիկական հագեցվածությունը թույլ չի տալիս իրականացնել բոլոր անհրաժեշտ հետազոտությունները և գործիքային միջամտություններն՝ ապահովելով հիվանդների լիարժեք ախտորոշումը և բուժումը:

Կարևոր նշանակություն ունեն նոր տիպի հետազոտությունները, որոնք արդյունավետորեն կլրացնեն գործող հետազոտություններին:
Այն հետազոտությունները և գործիքային միջամտությունների մասով, որոնք չկան ծննդատանը, հաճախորդները ուղեգրվում են այլ բուժհաստատություններ: Որպես հետևանք խզվում է կապը ծննդատան հետ, հիվանդները կրում են անհարմարություններ և նվազում է ծննդատան եկամուտը:
Նոր ծառայությունների ներդրման հետ կապված իրականացվել է շուկայի մանրամասն վերլուծություն, որի արդյունքում առաջացել է մրցակցային առավելություններ ունեցող լաբորատոր, գործիքային, վիրաբուժական, գինեկոլոգիական և կենցաղային սարքավորումների ձեռքբերման անհրաժեշտություն, որոնք արտացոլված են Հավելված 1-ում:

## 4. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներդրումային ծրագրի նպատակն է հաճախորդներին մատուցել բոլոր անհրաժեշտ ծառայությունները տեղում: Այն է՝ գործող առկա ռեսուրսներին ավելացնել և ստեղծել նոր կոնսուլտացիոն-ախտորոշիչ կենտրոն, ինչպես նաև լիարժեք գինեկոլոգիական ծառայություն (վիրաբուժական, ինվազիվ):
Դրան հասնելու համար պետք է լուծվեն մի շարք խնդիրներ՝ տեխնիկական վերազինում, վերանորոգում, համապատասխան թույլտվությունների ձեռքբերում:

## 5. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՐԿԵՏԻՆԳ

Լիարժեք գինեկոլոգիական ծառայության ստեղծման անհրաժեշտությունը ծագել է մասնավորապես հիվանդների միջև անցկացված հարցման, ինչպես նաև պահանջարկի, առաջարկի, մրցակցային գների, համանման ծննդատներում առկա և շուկայական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա:
Իսկ կանանց կոնսուլտացիոն ախտորոշիչ բաժանմունքի ստեղծումը ուղղակիորեն կապված է ծննդօգնության թվաքանակի ավելացումով, լաբորատոր գործիքային մի շարք ծառայություններ չմատուցելու արդյունքում նկատվում է գումարային հոսքերի անկում, հիվանդների արտահոսք այլ բուժհաստատություններ:
Կոնսուլտացիոն ախտորոշիչ բաժանմունքը հնարավորություն կստեղծի՝

- սարքավորումների ներդրում,
- մատուցվող ծառայությունների ընդլայնում,
- մատչելի գները,
- մոտակայքում բնակչության հասանելիության և որակի ապահովումը,
- բուժական գործընթացի անխափանության ապահովումը,
- ծննդատան եկամուտների և ծառայությունների բարելավման ապահովումը:

Գինեկոլոգիական ծառայության ընդլայնումն իր հերթին հնարավորություն կստեղծի՝

- սարքավորումների ներդրման
- մասնագետների վերապատրաստման ՀՀ և արտերկրներում
- բուժական պրոցեսի և ծառայությունների ընդլայնման
- վճարովի ծարայությունների քանակի աճի:

Մրցակցային դաշտի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այլ բուժական հաստատությունները քայլեր են կատարում իրենց ծառայությունների բարելավման և

սարքավորումներով վերազինման ուղղությամբ: Թողնել իրավիճակն այնպես ինչպես կա կնշանակեր անտարբերություն դրսևորել ծննդատան հետագա զարգացման և գոյատևման առումով: Ոչ լիարժեք հագեցվածությունը և որոշակի սարքավորումների և ծառայությունների բացակայությունը զգալիորեն թուլացնում են ծննդատան մրցակցային կարողությունը և նվազում են ՓԲԸ-ի պոտենցիալ եկամուտները:
Մարքետինգի արդյունքներով անհրաժեշտ է իրականացնել ակտիվ գովազդային միջոցառումներ:
Ժամանակակից գովազդային հնարքները կիրականացվեն հետևյալ կերպ՝

- ծննդատան գովազդային վահանակների տեղադրում քաղաքի տարբեր վայրերում
- անհատական աշխատանքներ կանանց կոնսուլտացիաների բուժանձնակազմի հետ
- հանրային ԶԼՄ-ներով տեսահոլովակների ցուցադրում և այլն:

## 6. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ներդրումային ծրագրի կարևոր բաղկացուցիչ մասերից է նաև անձնակազմի կառավարման քաղաքականությունը: «Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» ՓԲԸ-ում ծրագրի իրականացման ժամանակ նախատեսվում է եղած անձնակազմի վերապատրաստում և ներգրավում նոր ծառայությունների մատուցման գործընթացին, բացի այդ թվով 12 նոր աշխատակից, որից՝ 8 բժիշկ, 3 բուժքույր և 1 այլ անձնակազմի աշխատակից: Գործունեության ողջ ընթացքում նախատեսվում է հաստատության աշխատակիցների աշխատավարձերի համահունչ բարձրացում: Աշխատողների թվաքանակը և նախատեսվող աշխատավարձի փոփոխությունները ըստ տարիների ներկայացված է աղյուսակ 1-ում:
Պետական պատվերի շրջանակներում մատուցած ծառայությունների դիմաց վարձատրումն իրականացվելու է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատվող չափորոշիչի:

Աղյուսակ 1
**«Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» ՓԲԸ-ում աշխատողների քանակը և միջին աշխատավարձը ըստ տարիների**

| | Բժիշկ | | | Բուժքույր | | | Կրտսեր բուժանձնակազմ | | | Այլ անձնակազմ վարչական | | | Ընդամենը ՀՀ հազ. դրամ | Ընդամենն տարեկան ՀՀ հազ. Դրամ | Ընդամենը աշխատակիցներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2020թ | 32 | 100,0 | 3200,0 | 40 | 98,0 | 3920,0 | 21 | 83,0 | 1743,0 | 12 | 116,0 | 1392,0 | 10255,0 | 123060,0 | 105 |
| 2021թ | 32 | 100,0 | 3200,0 | 40 | 98,0 | 3920,0 | 21 | 83,0 | 1743,0 | 12 | 116,0 | 1392,0 | 10255,0 | 123060,0 | 105 |
| 2022թ | 32 | 110,0 | 3520,0 | 40 | 100,0 | 4000,0 | 21 | 90,0 | 1890,0 | 12 | 125,0 | 1500,0 | 10910,0 | 130920,0 | 105 |
| 2023թ | 35 | 120,0 | 4200,0 | 41 | 110,0 | 4510,0 | 22 | 100,0 | 2200,0 | 12 | 130,0 | 1560,0 | 12470,0 | 149640,0 | 110 |
| 2024թ | 38 | 130,0 | 4940,0 | 43 | 115,0 | 4945,0 | 22 | 105,0 | 2310,0 | 12 | 140,0 | 1680,0 | 13875,0 | 166500,0 | 115 |
| 2025թ | 40 | 150,0 | 6000,0 | 43 | 120,0 | 5160,0 | 22 | 105,0 | 2310,0 | 12 | 150,0 | 1800,0 | 15270,0 | 183240,0 | 117 |
| 2026թ | 40 | 160,0 | 6400,0 | 43 | 130,0 | 5590,0 | 22 | 110,0 | 2420,0 | 12 | 160,0 | 1920,0 | 16330,0 | 195960,0 | 117 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2027թ | 40 | 170,0 | 6800,0 | 43 | 135,0 | 5805,0 | 22 | 115,0 | 2530,0 | 12 | 170,0 | 2040,0 | 17175,0 | 206100,0 | 117 |
| 2028թ | 40 | 180,0 | 7200,0 | 43 | 140,0 | 6020,0 | 22 | 120,0 | 2640,0 | 12 | 180,0 | 2160,0 | 18020,0 | 216240,0 | 117 |
| 2029թ | 40 | 190,0 | 7600,0 | 43 | 150,0 | 6450,0 | 22 | 125,0 | 2750,0 | 12 | 190,0 | 2280,0 | 19080,0 | 228960,0 | 117 |
| 2030թ | 40 | 210,0 | 8400,0 | 43 | 155,0 | 6665,0 | 22 | 130,0 | 2860,0 | 12 | 195,0 | 2340,0 | 20265,0 | 243180,0 | 117 |
| 2031թ | 40 | 220,0 | 8800,0 | 43 | 160,0 | 6880,0 | 22 | 145,0 | 3190,0 | 12 | 210,0 | 2520,0 | 21390,0 | 256680,0 | 117 |

Առկա նախնական արդյունքներից ակնհայտ է ամբողջ կառավարման ընթացքում աշխատակիցների աշխատավարձի աճ:
Ներդրման արդյունքում նախատեսվում է իրականացնել նաև բուժաշխատողների վերապատրաստում՝ ինչպես հայաստանյան առաջատար համալսարաններում և բուժհաստատություններում այնպես էլ արտերկրում:

## 7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ֆինանսական ծրագիրը հիմնված է այն ենթադրության վրա, որ ներդրող ՍՊԸ-ի հետ 2020թ.-ին կկնքվի **«Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն»** ՓԲԸ-ի հավատարմագրային կառավարման պայմանագիր 10 տարի ժամկետով, համաձայն որի՝ հավատարմագրային կառավարիչը կպարտավորվի առաջին 5 տարիների ընթացքում ներդնել 200.000.000 ՀՀ դրամ՝ բժշկական կենտրոնի վերանորոգման, տեխնիկական վերազինման, կադրերի վերապատրաստման համար, որոնք ըստ ծախսման ուղղությունների ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

**Ներդրումների իրականացման ժամանակացույց մլն. ՀՀ դրամ**

| **Միջոցառումներիան վանում** | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | **Ընդամենը** |
|---|---|---|---|---|---|---|
| Նախագծանախահաշվային աշխատանքներ | - | 0.5 | - | - | - | 0.5 |
| Վերանորոգում | - | 7.75 | 15.0 | 15.0 | | 37.75 |
| Սարքավորում-ներիգնում | 24.0 | 14.2 | 17.5 | 14.35 | 16.7 | 86.750 |
| Կահավորում | 0.5 | 2.0 | 3.0 | 1.0 | | 6.5 |
| Գովազդ | 0.2 | 0.7 | 0.7 | 0.7 | 0.7 | 3.0 |
| Կադրերի վերապատրաստում | 0.2 | 0.5 | 0.5 | 0.4 | 0.4 | 2.0 |
| Թույլտվություններ և փաստաթղթեր | 0.1 | 0.2 | 0.2 | | | 0.5 |
| Կրեդիտորական պարտքի մարում | 10.0 | 30.0 | 23.0 | | | 63.0 |
| **Ընդամենը** | 35 | 48,8 | 52,4 | 26.45 | 17.8 | 200.0 |

Նախատեսվում է իրականացնել մասնագիտական խորհրդատվության, կոնսուլտացիոն ախտորոշիչ կենտրոնի և գինեկոլոգիական ծառայության

իրականացման համար անհրաժեշտ շուրջ 650քմ. տարածքի վերանորոգում, որի ծախսերը կկազմեն 37.75մլն. դրամ:
Ներդրումային ծրագրի շրջանակներում ձեռքբերվող սարքավորումների ցանկը և դրանց արժեքները ներկայացված են հավելված 1-ում:

7.1 **«Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» ՓԲԸ-ի գործունեությունից ակնկալվող եկամուտներ և ծախսեր**

***Եկամուտների կանխատեսվող կառուցվածքը հիմնված է.***

- «Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» ՓԲԸ-ի 2018-2019 առաջին եռամսյակի թվականների ֆինանսական փաստացի ցուցանիշների վրա,
- բժշկական ծառայությունների մատուցման ընդհանուր շուկային վերլուծության
- բժշկական ծառայություններ սպառողների պահանջարկի ուսումնասիրության
- բժշկական ծառայությունների զարգացման շուկայի զարգացման միտումների վերլուծության վրա:

***Բժշկական ծառայությունների մատուցումից հասույթ***

Ներդրումային ծրագրի իրագործումից հասույթը ձևավորման հիմնական աղբյուր են հանդիսանալու՝

- պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող եկամուտ
- վճարովի հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների դիմաց ստացվող եկամուտ
- այլ եկամուտներ:

Ընդհանուր առմամբ բժշկական ծառայությունների մատուցումից ակնկալվող հասույթի հիմքում դրվել է «Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» ՓԲԸ-ի ներկայիս գործունեության ֆինանսական արդյունքները, շուկայի զարգացման կանխատեսումները, ծառայությունների սպառման ակնկալվող ծավալը և այլն: Բուժսպասարկումը լիարժեք կազմակերպելու համար կոնսուլտացիոն ախտորոշիչ կենտրոնում նախատեսվում է ստեղծել նաև նեղ մասնագիտական խորհրդատվական ծառայություն, որտեղ պայմանագրային կարգով կհրավիրվեն բարձրակարգ մասնագետներ այլ բուժհաստատություններից և արտերկրներից:
Նպատակահարմար է կազմակերպել հետևյալ կաբինետների գործունեությունը.

- ալերգոլոգիական,
- սեռաախտաբանական,
- հոգեբանական,
- սրտաբանական,
- գինեկոլոգ-էնդոկրինոլոգիական

Ծրագրային ողջ ժամանակահատվածում բուժհաստատության եկամուտը և ծախսերը ներկայացված է աղյուսակ 2-ում:
Պետական պատվերի շրջանակներում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման կանխատեսվող ծավալի հաշվարկման համար հիմք են ընդունվել ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրով հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայությունների համար հատկացված ֆինանսական միջոցների աճը, ինչպես նաև տվյալ տարում ներդրվող ծառայության համար պետական պատվերի կանխատեսվող գումարը:
Վճարովի ծառայությունների կանխատեսվող ծավալի հաշվարկման համար հիմք է հանդիսացել «Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» ՓԲԸ–ի կողմից փաստացի

արձանագրված ցուցանիշների, ինչպես նաև նոր ներդրվող ծառայությունների կանխատեսվող վճարովի ծառայությունների ծավալը:
Գործունեության այլ տեսակներից ստացվող եկամտի հաշվարկման համար հիմք է ընդունվել փաստացի եկամտի ծավալը, առկա պայմանագրերը, ինչպես նաև կանխատեսվող աճը:
Եկամտային մասով հավատարմագրային կառավարման 10 տարիների ընթացքում նախատեսվում է

- պետական պատվերի շրջանակներում մատուցվող ծառայությունների միջին տարեկան 2% աճ,
- վճարովի ծառայությունների միջին տարեկան 28% աճ,
- այլ աղբյուրներից ստացվող եկամտի միջին տարեկան 2% աճ

Այսպիսով, ծրագրի իրականացման արդյունքում Ընկերությունը կունենա ընդամենը եկամտի միջին տարեկան 9.4% աճ:
Ներդրումային ծրագրի իրագործման արդյունքում Ընկերության ակնկալվող միջին տարեկան շահույթը կկազմի 28,4 մլն դրամ:

## 8.Շահույթի բաշխում

Ներդրումային ծրագրի իրականացման փուլում նախատեսվում է 5 տարվա ընթացքում ներդնել 200.0 մլն դրամ:

Ծրագրի իրականացման ողջ ժամանակահատվածում ակնկալվում է զուտ շահույթի ստացում շուրջ 356.5 մլն դրամի չափով, որից ծրագրային 10 տարիների ընթացքում 22%–ը նախատեսվում է սահմանել հիմնադրին շահաբաժնի տեսքով /աղյուսակ 4/:

**«Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն»** ՓԲԸ- ում ակնկալվող զուտ շահույթի բաշխումը

Ինչպես երևում է աղյուսակից՝ հավատարմագրային կառավարման 10 տարիների ընքացքում հիմնադրին վճարվելիք շահաբաժնի չափը կազմում է շուրջ 61.7 մլն ՀՀ դրամ:

Աղյուսակ 3

**<<Քանաքեռ-Զեյթուն ծնդատուն>> ՓԲԸ ի ֆինանսական արդյունքների կանխատեսում**

մլն. ՀՀ դրամ

| | | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 | 2030 | 2031 | ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| I | ***ՀԱՄԱԽՍԱՌՆ ԵԿԱՄՈՒՏ, այդ թվում*** | 159.3 | 170.3 | 206.6 | 223.3 | 238.5 | 261 | 281.3 | 306.1 | 331.7 | 358 | 507.3 | 542.6 | 3586.0 |
| 1 | *Բժշկական ծառայությունների մատուցումից ստացվող* | 154.3 | 164.3 | 199.4 | 214.7 | 228.2 | 248.5 | 266.4 | 288.2 | 310.2 | 332.2 | 443.1 | 465.5 | 3315.0 |
| 1,1 | *Պետական պատվերի շրջանակներում մատուցվող ծառայություններից* | 136.3 | 139.1 | 141.8 | 144.7 | 147.6 | 150.5 | 153.5 | 156.6 | 159.7 | 162.9 | 179.9 | 183.5 | 1856.1 |
| 1,2 | *Վճարովի բուժ ծառայություններից* | 18 | 25.2 | 57.6 | 70 | 80.6 | 98 | 112.8 | 131.6 | 150.4 | 169.2 | 263.2 | 282 | 1458.6 |
| 2 | *Գործունեության այլ տեսակներից ստացվող* | 5 | 6 | 7.2 | 8.6 | 10.4 | 12.4 | 14.9 | 17.9 | 21.5 | 25.8 | 64.2 | 77 | 270.9 |
| II | ***ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ, այդ թվում*** | 158.5 | 161 | 176 | 198 | 219 | 240 | 259 | 283 | 303 | 325 | 443 | 467 | 3232.1 |
| 1 | Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ | 123.1 | 123.1 | 130.9 | 149.6 | 166.5 | 183.2 | 196 | 206.1 | 216.2 | 229 | 290 | 304.1 | 2317.8 |
| 2 | Դեղորայք և ԲՆԱ | 12 | 12.8 | 15.6 | 16.8 | 18 | 19.7 | 21.2 | 23.1 | 25 | 27 | 38.2 | 40.9 | 270.3 |
| 3 | Տրանսպորտային ծախսեր | 0.5 | 0.5 | 0.6 | 0.7 | 0.7 | 0.8 | 0.9 | 1 | 1 | 1.1 | 1.6 | 1.7 | 11.1 |
| 4 | Տնտեսական և գրասենյակային նյութեր | 6 | 6.4 | 6.9 | 7.4 | 7.9 | 8.7 | 11.2 | 12.2 | 13.2 | 14.3 | 20.2 | 21.6 | 136 |
| 5 | Կոմունալ ծախսեր | 9.2 | 9.8 | 11.9 | 12.9 | 13.7 | 15 | 16.2 | 17.6 | 19.1 | 20.6 | 29.2 | 31.3 | 206.5 |
| 6 | Բուժգործիքների տեխնիկական սպասարկում | 1.5 | 1.6 | 1.9 | 2.1 | 2.2 | 2.5 | 2.6 | 2.9 | 3.1 | 3.4 | 10.5 | 11.3 | 45.6 |
| 7 | Հիմնական միջոցների մաշվածք | 1.2 | 1.3 | 1.6 | 1.7 | 1.8 | 2 | 2.1 | 2.3 | 2.5 | 2.7 | 14.8 | 15.8 | 49.8 |
| 8 | Հիմնական միջոցների ընթացիկ վերանորոգում | 1.1 | 1.2 | 1.4 | 1.5 | 1.6 | 1.8 | 1.9 | 2.1 | 2.3 | 4.8 | 7.9 | 7.8 | 35.4 |
| 9 | Հարկային պարտավորություններ | 1 | 1.1 | 1.3 | 1.4 | 1.5 | 1.6 | 1.8 | 1.9 | 5.8 | 6.2 | 7.5 | 8 | 39.1 |
| 10 | Այլ ծախսեր | 3 | 3.2 | 3.9 | 4.2 | 4.5 | 4.9 | 5.3 | 13.3 | 14.4 | 16.2 | 23 | 24.6 | 120.5 |
| III | **Շահույթ (վնաս)** | 0.8 | 9.3 | 30.6 | 29 | 29.7 | 28.8 | 29.1 | 35.7 | 39.1 | 55.7 | 64.4 | 75.6 | 427.8 |
| IIII | **Շահութահարկ** | 0.2 | 1.9 | 6.1 | 5 | 5.2 | 4.6 | 4.8 | 5.1 | 5.8 | 9.1 | 10.3 | 13.2 | 71.3 |
| IV | **Զուտ շահույթ (վնաս)** | 0.6 | 7.4 | 24.5 | 20 | 20.8 | 28.2 | 29.2 | 28.9 | 35.4 | 45.4 | 55.6 | 60.5 | 356.5 |
| V | **ներդրման հետ վերադարձ** | 0 | 0 | 7 | 9 | 10 | 12.6 | 15.8 | 15.5 | 25.6 | 30.6 | 36.6 | 37.3 | 200 |

**<<Քանաքեռ-Զեյթուն ծնդատուն>>** ՓԲԸ-ում ակնկալվող զուտ շահույթի բաշխումը

Աղյուսակ 4 մլն. ՀՀ դրամ

| | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 | 2030 | 2031 | Ընդամենը | Ընդամենը % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շահույթ (վնաս) | 0.8 | 9.3 | 30.6 | 29 | 29.7 | 28.8 | 29.1 | 35.7 | 39.1 | 55.7 | 64.4 | 75.6 | 427.8 | |
| Շահութահարկ | 0.2 | 1.9 | 6.1 | 5 | 5.2 | 4.6 | 4.8 | 5.1 | 5.8 | 9.1 | 10.3 | 13.2 | 71.3 | |
| Զուտ շահույթ (վնաս) | 0.6 | 7.4 | 24.5 | 20 | 20.8 | 28.2 | 29.2 | 28.9 | 35.4 | 45.4 | 55.6 | 60.5 | 356.5 | 100% |
| ներդրման հետ վերադարձ | 0 | 0 | 7 | 9 | 10 | 12.6 | 15.8 | 15.5 | 25.6 | 30.6 | 36.6 | 37.3 | 200 | 56% |
| Շահաբաժին հիմնադրին | 0.3 | 5 | 2.8 | 4.8 | 4.6 | 5.6 | 5.6 | 4.8 | 5.3 | 6.3 | 7.3 | 9.3 | 61.7 | 22% |
| Մասհանում հավատարմագրային կառավարչին | 0.4 | 4.5 | 5.6 | 6.2 | 7.3 | 7.4 | 7.7 | 6.3 | 9.4 | 11.4 | 13.4 | 15.2 | 94.8 | 26% |

Աղյուսակ 5

| հ/հ | Հոդվածների անվանումը | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 | 2028 | 2029 | 2030 | 2031 | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| I | ***ՀԱՄԱԽՍԱՌՆ ԵԿԱՄՈՒՏ, այդ թվում*** | 159.3 | 170.3 | 206.6 | 223.3 | 238.5 | 261 | 281.3 | 306.1 | 331.7 | 358 | 507.3 | 542.6 | 3586.0 |
| 1 | *Բժշկական ծառայությունների մատուցումից ստացվող* | 3.8 | 12.5 | 34.5 | 29.2 | 24.5 | 25.7 | 27.4 | 37.0 | 43.4 | 48.9 | 42.5 | 49.0 | 378.3 |
| 1,1 | Պետական պատվերի շրջանակներում մատուցվող ծառայություններից | 3.0 | 3.2 | 3.9 | 4.2 | 4.5 | 4.9 | 5.3 | 13.3 | 14.4 | 16.2 | 17.4 | 18.7 | 20.1 |
| 1,2 | Վճարովի բուժ ծառայություններից | 0.8 | 9.3 | 30.6 | 25.0 | 20.0 | 20.8 | 22.1 | 23.7 | 28.9 | 32.7 | 25.1 | 30.3 | 269.2 |
| 2 | *Գործունեության այլ տեսակներից ստացվող* | 0.2 | 1.9 | 6.1 | 5.0 | 4.0 | 4.2 | 4.4 | 4.7 | 5.8 | 6.5 | 5.0 | 6.1 | 53.8 |

Աղյուսակ 6
Անհրաժեշտ սարքավորումները

| | Սարքավորման անվանումը | Անվանումը անգլերեն | Քանակը | Արժեք ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|
| 1 | Բազմաֆունկցիոնալ մահճակալներ, գինեկոլոգիական սեղաններ | ICU HOSPITAL BEDS | 5 | 8500000 |
| 2 | Մահճակալային մոնիտորներ բազմաֆունկցիոնալ NIBP, IBP, | INFINIUM Medical | 5 | 5280000 |
| 3 | Կենտրոնական հսկողության մոնիտոր | CENTRAL MONITORING SYSTEM | 2 | 2500000 |
| 4 | Դեֆիբրիլյատորներ | Defibrillator | 2 | 6250000 |
| 5 | Կշեռքներ մանկական | Weighing machine | 4 | 2900000 |
| 6 | Տոնոմետրեր | Tonometers | 5 | 144000 |
| 7 | Հարմահճակալային դարակներ | Bed stand medical cabinets | 5 | 480000 |
| 8 | Հարմահճակալային սեղանիկներ | Bed tabels | 5 | 2000000 |
| 9 | Շտատիվներ | Racks | 5 | 120000 |
| 10 | Պադգարակներ պառկած տեղափոխելու համար | Wheel litter | 2 | 7700000 |
| 11 | Նստասայլակ | Wheelchair | 2 | 150000 |
| 12 | COD (Անհետաձգելի բուժ.օգնության հավաքածու) | COD | 2 | 300000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 13 | Թթվածնի շարժական փոքր բալոն | Oxygen tanks | 1 | 150000 |
| 14 | Լարինգոսկոպ | Laryngoscope | 2 | 25000 |
| 15 | Ամբու | AMBU mask | 1 | 250000 |
| 16 | Արհեստական շնչառական սարք | Artificial pulmonary ventilation | 2 | 56000000 |
| 17 | Շարժական | Aspirator | 1 | 300000 |
| 18 | ԷՍԳ 12 արտածմամբ | ECG 12 LEAD | 1 | 1000000 |
| 19 | Գծային էխոտվիչ | Transduser | 1 | 2000000 |
| 20 | Տրանսվագինալ էխոտվիչ | Transduser | 1 | 1500000 |
| 21 | Սատուրոմետր | Oximeter - Pulse | 1 | 250000 |
| 22 | Գլյուկոմետր | Glucometer | 1 | 150000 |
| 23 | Չհրկիզվող պահարան | Lock box | 1 | 150000 |
| 24 | Սառնարան | Refrigerator | 1 | 500000 |
| 25 | Համակարգիչ և տպիչ | PC and Printer | 2 | 500000 |
| 26 | Շիրմա | Screens | 2 | 200000 |
| 27 | Բազմաֆունկցիոնալ մահճակալներ | ICU HOSPITAL BEDS | 20 | 14400000 |
| 28 | Կշեռքներ | Weighing machine | 1 | 400000 |
| 29 | Հարմահճակալային դարակներ | Bed stand medical cabinets | 20 | 1900000 |
| 30 | Հարմահճակալային սեղանիկներ | Bed tabels | 20 | 1900000 |
| 31 | Շտատիվներ | Racks | 10 | 240000 |
| 32 | Նստասայլակ | Wheelchair | 2 | 150000 |
| 33 | Համակարգիչ և տպիչ | PC and Printer | 1 | 290000 |
| 34 | Հիստերոսկոպ | | 1 | 14400000 |
| 35 | Կոագուլյատոր | Coagulator | 1 | 4500000 |
| 36 | Ծննդաբերական սեղաններ | Table | 2 | 4800000 |
| 37 | Գործիքների սեղան | Table | 2 | 240000 |
| 38 | Գործիքների պահարան | Medical cabinet | 2 | 1920000 |
| 39 | Շտատիվ | Racks | 2 | 48000 |
| 40 | Վիրահատական փոքր լապտեր | Surgical lighting system | 2 | 480000 |
| 41 | Շարժական ախտահանիչ լամպ | Antibacterial lamp | 1 | 50000 |
| 42 | ԷՍԳ 12 արտածմամբ | ECG 12 LEAD | 1 | 1000000 |
| 43 | ԷԽՈ | 3D- 4D Ultrasound Machine | 1 | 1700000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 44 | ԷԽՈ գինեկոլոգիական տվիչ | Transducer | 1 | 1200000 |
| 45 | ԷԽՈ կոնվեկս տվիչ | Transducer | 1 | 1000000 |
| 46 | X-ray (mamograph) | X-ray | 1 | 24000000 |
| 47 | Կշեռքներ | Weighing machine | 2 | 250000 |
| 48 | Տոնոմետրեր | Tonometers | 4 | 100000 |
| 49 | Շիրմա | Screens | 2 | 150000 |
| 50 | Նստասայլակ | Wheelchair | 1 | 70000 |
| 51 | Շտատիվներ | Racks | 2 | 50000 |
| 52 | Համակարգիչ և տպիչ | PC and Printer | 1 | 290000 |
| 53 | Տպիչ, սկաներ, պատճենահանիչ սարք, ֆաքս | Scaner Xerox Fax | 1 | 120000 |
| 54 | Լազերային պրոեկտոր | Lazer projector | 1 | 120000 |
| | Ընդամենը | | | 175067000 |